


Կիպրոսի «Արձագանք» ամսաթերթը հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության դեմ հայ դատի հանձնախմբերի պայքարի մասին (2010 – 2015 թթ.)


Մովսիսյան Ֆելիքս Վ.

*պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0001-7579-9672>
felmov@mail.ru, felmov52@gmail.com

Ճարոյան Էլեն Ա.

*պատմության ամբիոնի հայցորդ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0007-8318-9345>
elen2099@mail.ru, sharoyanelen@gmail.com

ՀՏԳ՝ 94 (495); EDN: TFEODK

DOI: 10.58587/18292437-2025.5-46

Հանգուցաբառեր և բառակապակցություններ: Հայոց ցեղասպանություն, Հայ Դատ, հանձնախմբեր, սիյուռք, Հայաստան, ճանաչում, դատապարտում, հատուցում, «Արձագանք» ամսաթերթ

Кипрская газета «Арцаганк» о борьбе Армянского Национального Комитета против турецкого отрицания Геноцида армян (2010–2015 гг.)

Мовсисян Феликс В.

*Доктор исторических наук, профессор,
Ванадзорский государственный университет имени О. Туманяна (Ванадзор, РА)*

Шароян Элен А.

*Соискатель кафедры истории
Ванадзорский государственный университет имени О. Туманяна (Ванадзор, РА)*

Аннотация: С момента начала процесс международного признания Геноцида армян остаётся в центре постоянного внимания армянских политических партий диаспоры, различных структур, общественных организаций и Армянских национальных комитетов.

Работа, осуществляемая в данном направлении, регулярно освещается в армянской диаспорской прессе.

Ежемесячник «Ардзаганк», издаваемый Молодёжным центром АРФД «Азатамарт» на Кипре, подробно рассматривает деятельность структур и организаций армянской диаспоры, Армянских национальных комитетов и офисов в разных странах мира, направленную на признание и осуждение Геноцида армян.

Особое внимание издание уделяет событиям, приуроченным к 100-летию Геноцида армян, происходивших в нескольких десятках странах, а также анализу резолюций и заявлений, принятых по их итогам.

«Ардзаганк» также систематически освещает политическую и информационно-пропагандистскую деятельность комитетов Армянского дела, направленную против проявлений турецкого дениализма, выражая удовлетворение результатами этой деятельности.

Журнал полностью разделяет позицию комитетов, согласно которой турецкий дениализм должен получать не только адекватный и целенаправленный ответ, но и сталкиваться с неудачами исключительно благодаря активной и сплочённой позиции армянской общины.

Высоко оценивая деятельность комитетов Армянского дела в этом направлении, «Ардзаганк» подчёркивает, что комитеты, действующие в различных странах мира, с момента своего основания находятся в числе передовых борцов за справедливое дело армянского народа.

Ключевые слова и словосочетания: Геноцид армян, армянский вопрос, комитеты, диаспора, Армения, признание, осуждение, возмещение, газета «Арцаганк»

The Cypriot newspaper Artsakank on the struggle of the Armenian National Committee against Turkish denial of the Armenian Genocide (2010–2015)

Movsисяn Feliks V.

*Doctor of Historical Sciences, Professor,
Vanadzor State University after H. Tumanyan (Vanadzor, RA)*

Sharoyan Elen A.

Candidate of the Department of History

Vanadzor State University after H. Tumanyan (Vanadzor, RA)

Abstract. Since the outset, the process of international recognition of the Armenian Genocide has remained a focal point of sustained attention for Armenian political parties in the diaspora, as well as for various institutions, civil society organizations, and Armenian National Committees.

The efforts undertaken in this sphere are consistently documented and analyzed in the Armenian diaspora press.

The monthly publication *Artsakank*, issued by the ARF Youth Center "Azatamart" in Cyprus, offers in-depth examinations of the activities carried out by diaspora institutions and organizations, Armenian National Committees, and their offices across various countries, all aimed at promoting recognition and condemnation of the Armenian Genocide.

Special emphasis is placed on events commemorating the centennial of the Armenian Genocide, held in several dozen countries, as well as on the evaluation of resolutions and statements adopted in their aftermath.

Artsakank also regularly covers the political and informational-advocacy activities of the Armenian Cause Committees, particularly their efforts to counter Turkish denialism, and expresses satisfaction with the outcomes of these initiatives.

The journal fully endorses the stance of the Committees, which maintain that Turkish denialism must be met not only with a proportionate and strategic response but also with consistent setbacks, achieved through the active and unified position of the Armenian community.

In recognizing the significance of the Committees' contributions, *Artsakank* underscores that these bodies, active in various countries worldwide, have, since their inception, been at the forefront of the struggle for justice on behalf of the Armenian people.

Keywords and phrases: Armenian Genocide, Armenian Cause, committees, diaspora, Armenia, recognition, condemnation, reparations, *Artsakank* newspaper

Ներածություն

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը մշտապես եղել է սփյուռքահայ մամուլի, ազգային կուսակցությունների, բազմաթիվ հասարակական, երիտասարդական և լոբբիստական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Սույն հոդվածում առաջին անգամ ներկայացվում է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և ժխտումը քրեականացնող բանաձևերի ընդունման ուղղությամբ աշխարհի տարբեր երկրների Հայ դատի հանձնախմբերի գործունեության լուսաբանումը Կիպրոսի «Արձագանք» ամսաթերթում:

«Արձագանք» ամսաթերթը

«Արձագանք» ամսաթերթը լույս է տեսնում Կիպրոսի Նիկոսիա քաղաքում, հանդիսանում է ՀՅԴ «Ազատամարտ» երիտասարդական կենտրոնի հրատարակություն, որը պարբերաբար լուսաբանում է Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող քաղաքական կարևորագույն իրադարձությունները, Կիպրոսի հայ համայնքի կրթական, մշակութային, սպորտային, հոգևոր կյանքը [1, էջ 158], ՀՅԴ հայաստանյան և Սփյուռքի կառույցների աշխատանքները, անդրադառնում է Հայ Դատի հանձնախմբերի ու նրա գրասենյակների գործունեությանը:

Հայ Դատի հանձնախմբերը

Աշխարհի տասնյակ երկրներում գործող Հայ Դատի հանձնախմբերը զգալի աշխատանք են կատարում հայկական հարցի վերաբերյալ միջազգային հասարակական կարծիքի ձևավորման ուղղությամբ: Հանձնախմբերը պաշտպանում են հայ ժողովրդի պատմականորեն

ձևավորված արդարացի պահանջներն ու ազգային ճգնումները, տարբեր մակարդակներում ներկայացնում են հայության հավաքական տեսակետը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում, իրենց գլխավոր խնդիրը համարում են հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումը [2, էջ 667]:

«Արձագանք»-ը Հայ Դատի հանձնախմբերի գործունեության մասին

Աշխարհասփյուռ ՀՅԴ կառույցների և Հայ Դատի հանձնախմբերի գործունեությունը Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման և հայկական հարցի արդարացի լուծման գործում ներկայումս պարբերաբար լուսաբանվում է սփյուռքահայ մամուլում: Նիկոսիայի «Արձագանք» ամսաթերթը «ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի աշխատանքները տարբեր երկրներում» խորագրի տակ ներկայացնում է Հայ Դատի հանձնախմբերի կազմավորման համառոտ պատմությունը: Ըստ ամսաթերթի՝ հանձնախմբերը, թեև, գործում են վեց տասնամյակից ավել, բայց դրանց ակունքները գալիս են ավելի վաղ ժամանակներից: Առաջին աշխարհամարտի վերջին Ամերիկայի Միացյալ Նահանգներում հիմնվել է «Հայաստանի անկախության համար ամերիկյան կոմիտե», իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ «Հայաստանի Հանրապետության պավիրակություն», որոնց միջոցով ՀՅԴ-ն միջազգային մակարդակով քաղաքական և քարոզչական աշխատանքներ էր իրականացնում «հանուն հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչման և Հայաստանի անկախության» [3, 2010, № 4, ապրիլ, էջ 11]:

1944 թ. դեկտեմբերին Նյու Յորքում ՀՅԴ-ն կազմավորեց Հայ Դատի հանձնախումբ, որը հայ ժողովրդի իրավունքների խնդիրը 1945 թ. մարտ-ապրիլին ներկայացրեց ԱՄՆ-ի, Անգլիայի և Խորհրդային Միության կառավարություններին, այնուհետև Պոտսդամի գագաթաժողովին, երեք պետությունների արտաքին գործերի նախարարներին և մի շարք կառույցներին: 1945 թ. հուլիսի 7-ին ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբը հայության արդարացի պահանջի մասին Սան Ֆրանցիսկոյում կայացած խորհրդաժողովին ներկայացրեց ընդարձակ և հիմնավորված հուշագիր, որը լայն արձագանք գտավ ամերիկյան և միջազգային մամուլում: ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբը, բացի քաղաքական այս քայլերից, հետագայում մեծ ծավալի աշխատանքներ կատարեց հանրային մտքին հասանելի դարձնելու հայոց պահանջատիրության խնդրի արդարացիությունը: Վերջին տասնամյակներում ՀՅԴ Հայ Դատի գրասենյակներ են բացվել 1984 թ.՝ Վաշինգտոնում, 1993 թ.՝ Մոսկվայում, 2001 թ.՝ Երևանում, 2002 թ.՝ Բրյուսելում և 2005 թ.՝ Բեյրութում [3, 2010, № 4, ապրիլ, էջ 11]:

2010 թ. հրապարակումներում ամսաթերթը բազմաթիվ լուրեր ու տեղեկություններ է զետեղում Հայոց ցեղասպանության 95-ամյակի կապակցությամբ աշխարհի տարբեր անկյուններում Հայ Դատի հանձնախմբերի գործունեության մասին՝ ընդգծելով, որ համայն հայությունը միակարծիք ու աննահանջ է հայոց արդարության և հատուցման պահանջում: Հայությունը երբեք «չպետք է մոռանա իր անմեղ զոհերին և երբեք չպետք է դադարեցնի Թուրքիայից հատուցման պահանջը» [3, 2010, № 1, հունվար, էջ 8]:

«Արձագանք»-ը տպագրում է ՀՅԴ բյուրոյի, ՄԴՀԿ և ՌԱԿ կենտրոնական վարչությունների 2010 թ. փետրվարի 24-ի միացյալ հայտարարությունը՝ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին ընդառաջ: Հայտարարությունում կարևորելով անցած տասնամյակներում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ սիյուռքի կառույցների կատարած աշխատանքը, միաժամանակ նշվում էր, որ արդարությունը տակավին չի հաղթանակել, Թուրքիան համառորեն չի ընդունում իր իրականացրած ոճրագործությունը, թեև բազմաթիվ պետություններ արդեն պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Այլընտրանք չկա, «հայության բոլոր հատվածների գիտակցությամբ, մեր անկախ պետականության հզորացմամբ մենք պետք է հասնենք աշխարհի և նույնիսկ Թուրքիայի կողմից մեր Արդար Դատի ճանաչմանը» [3, 2010, № 2, փետրվար, էջ 1]:

«Արձագանք»-ը 2010 թ. փետրվարի համարում բազմաբնույթ նյութեր է տպագրում աշխարհի տարբեր երկրների Հայ Դատի հանձնախմբերի գործունեության մասին: Տեղեկացվում

է, որ փետրվարի 19-ին Կիպրոսի Հայ Դատի հանձնախումբը շնորհավորական նամակ է հղել Կիպրոսից Եվրոպական խորհրդի անդամ Յոաննես Կասաուլիտիսին: Հունիսի վերջին Եվրոպական խորհրդարանում կայացած «Եվրոպական միության ռազմավարությունը Հարավային Կովկասում» թեմայով քննարկման ժամանակ նա ընդհատել է բուլղարացի պատգամավոր Կիրիլովի զեկույցը՝ որակելով այն միակողմանի, որտեղ խոսք չի հնչել Ադրբեյջանից և Լեռնային Ղարաբաղից հարյուր հազարավոր հայ փախստականների մասին: Հայ Դատի հանձնախումբն այդ քայլի համար Ի.Կասաուլիտիսին անվանել է Հայկական հարցի ջատագով և հայ ժողովրդի բարեկամ, բողոքի նամակ է գրել «Եվրոնյուզի» խմբագրությանը, որը միակողմանի լրատվություն է ներկայացրել Ղարաբաղի խնդրի մասին՝ հենվելով ադրբեյջանական ապատեղեկատվության վրա:

«Արձագանք»-ը տեղեկացնում է, որ Ֆրանսիայի ՀՅԴ կառույցի որոշմամբ Փարիզում բացվել է Հայ Դատի գրասենյակ, որը Եվրոպայի Հայ Դատի Բրյուսելի գրասենյակի հետ համագործակցելով պետք է աշխատի Ֆրանսիայի քաղաքական, պետական, ակադեմիական և այլ շրջանակների հետ: Թերթը հայտնում է, որ 2010 թ. հունվարի 23-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացել է տեղի Հայ Դատի հանձնախմբի վերականգման ժողովը՝ երկրի բոլոր հայաշատ քաղաքներից ժամանած մոտ 60 պատվիրակների մասնակցությամբ: ՀՅԴ Բյուրոյի և Հայ Դատի հանձնախմբի Կենտրոնական վարչության անդամ Լևոն Մկրտչյանը կարևորել է աշխարհասփյուռ հանձնախմբերի գործադրած ջանքերը ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Մի խումբ բուլղարացի գործիչներ իրենց խոսքում հավաստիացրել են, որ հայ գործընկերների հետ միասին կպայքարեն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Բուլղարիայի խորհրդարանում բարձրաձայնելու համար: 2010 թ. փետրվարի 12-ին Արաբական Միացյալ Էմիրությունների Հայ Դատի հանձնախումբը Աբու Դաբիում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը կազմակերպել է կյոր սեղան՝ նվիրված Հայոց ցեղասպանության ճանաչման և հայ-թուրքական հարաբերությունների ընթացքին [3, 2010, № 2, փետրվար, էջ 11]:

Ուշադրությամբ հետևելով միջազգային լրահոսին՝ «Արձագանք»-ը նկատում է, որ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի նախօրեին, շնորհիվ նաև Հայ Դատի հանձնախմբերի գործունեության, աշխարհի տարբեր երկրներում ակտիվ աշխատանքներ են տարվում հայության նկատմամբ 20-րդ դարի սկզբում իրականացրած ոճրագործության ճանաչման և դատապարտման ուղղությամբ: Ըստ ամսաթերթի՝ այդ կապակցությամբ առաջին չակնկալված քայլն արեց

Իսպանիայում Կատալոնիայի ինքնիշխան կառավարությունը, որը փետրվարի 26-ին միաձայն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուն անմիջապես կապ հաստատեց իսպանացի իր պաշտոնակցի և կատալոնացի պաշտոնյաների հետ և «արտահայտելով իր զայրույթը՝ պահանջեց ներողություն խնդրել»: Երկու օր անց «Մի-Բի-Էս» հեռուստաընկերությունը «Միքսթի մինիթա» հաղորդման ժամանակ ցուցադրեց Միքիայի անապատներում գտնված հայերի ոսկորները: Թուրքերն իրենց սովորության համաձայն, գրում է «Արձագանք»-ը, հարցականի տակ դրեցին այդ կադրերի իսկությունը, ժխտեցին հայերի նկատմամբ իրականացրած ոճրագործությունը և մեղադրեցին հայկական լոբբին՝ «Մի-Բի-Էս»-ի վրա ճնշում գործադրելու մեջ [3, 2010, № 3, մարտ, էջ 5]:

Մարտի 4-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը մեկ ձայնի առավելությամբ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև ընդունեց: Թուրքիան, որպես բողոք, իր դեսպանին ետ կանչեց Վաշինգտոնից, իսկ պետական նախարարը հետաձգեց իր այցը ԱՄՆ: Մինչ թուրքական պոռթկումների հանդարտելը, գրում է «Արձագանք»-ը, պաշտոնական Անկարային երկրորդ «կործանարար հարվածը» հասցրեց Ծվեդիայի խորհրդարանը: Դարձյալ մեկ ձայնի առավելությամբ Ծվեդիայի խորհրդարանը 2010 թ. մարտի 11-ին բանաձև ընդունեց և կոչ արեց երկրի կառավարությանը, որպեսզի ՄԱԿ-ի, Եվրոպական Միության և Թուրքիայի հետ գործակցելով ապահովի հայերի, Պոնտոսի հույների և ասորիների ցեղասպանության ճանաչումը: Նախքան քվեարկությունը՝ Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը, արտգործնախարար Ա. Դավութօղլուն շվեդական իշխանություններին հայտնել էին իրենց մտահոգությունը բանաձևի ընդունման հարցում, որը կվնասի երկու երկրների հարաբերություններին: Ամսաթերթի լրատվությամբ՝ Ծվեդիայի վարչապետ Ֆ. Ռայնֆելտը Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հետ ունեցած հեռախոսագրույցի ժամանակ նշել է, որ խորհրդարանի որոշումը պարտադիր կատարման ենթակա չէ իր կառավարության համար: Այդ հայտարարության համար Ծվեդիայի Ընկերվարական ժողովրդավար կուսակցությունը դատական հայց է ներկայացրել վարչապետի դեմ, որը խորհրդարանի որոշումը համարել է օրենքի ուժ չունեցող: Ծվեդիայի վարչապետը հայտնել է, որ չի ցանկանում թուրքերի հետ հարաբերությունները խաթարել, որից ոգևորված որոշ թուրք դիվանագետներ կոչ են արել Միացյալ Նահանգներին՝ հետևել Ծվեդիայի օրինակին [3, 2010, № 3, մարտ, էջեր 1-2]:

«Արձագանք»-ը նկատում է, որ թուրքական ոչ բոլոր լրատվամիջոցներն են քննադատում ԱՄՆ-ին և Ծվեդիային՝ ընդունած բանաձևերի համար: Մասնավորապես թուրքական «Միլլի-յեթ» օրաթերթը հարց է տալիս. «Միթե՞ ժամանակը չէ, որ Արևմուտքի մեր բոլոր դեսպաններին ետ կանչելու փոխարեն, անկեղծորեն քննարկենք 95 տարի առաջ տեղի ունեցած կեղտոտ գործը՝ պարզելու համար, թե որտե՞ղ ենք սխալ գործել»: Նույն կարծիքն են արտահայտել նաև «Ռադիկալ» թերթի վերլուծաբան Չենկիզ Չանտարը, հայտնի թուրք մտավորականներ Փաթիի Չեքիրկեն, Հաթի Ուլունեկին և Ահմեդ Ալթանը: Նրանց կարծիքով Թուրքիան պետք է «հաշվի նստի ոչ թե Ծվեդիայի հետ, այլ՝ իր պատմության և չպետք է թաքցնի իր սարսափելի հանցանքն ու ոճրագործությունը» [3, 2010, № 3, մարտ, էջ 2]:

Ըստ ամսաթերթի՝ բոլորովին այլ մոտեցում ունեն Թուրքիայի իշխանությունները, քան որ վարչապետ Ռ. Թ. Էրդողանը, մարտի 17-ին Լոնդոնում, սպառնացել է իր երկրից արտաքսել անօրինական աշխատող տասնյակ հազար հայերի: Վարչապետի այս «ջղագրգիռ ու չհաշվարկված պոռթկումը» բխում է Ծվեդիայի և ԱՄՆ-ի ընդունած բանաձևերից ու հաշվարկված սպառնալիք է՝ ուղղված Հայաստանի իշխանություններին՝ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու ձգտմանը: Թուրքիայի իրական սպառնալիքը «Հայաստանի Հանրապետության պետականության վերացումն ու հայության իսպառ բնաջնջումն է», որը Հայաստանի իշխանությունները պետք է հստակ գիտակցեն: Եվրոպական երկրների ղեկավարների հետ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի «աչքերը շլացնող և քաղաքական առումով բովանդակազուրկ հանդիպումները» սոսկ նպատակ են հետապնդում արագացնել Թուրքիայի և Հայաստանի հաշտեցման գործընթացը: «Արձագանք»-ի կարծիքով՝ Թուրքիայի նկատմամբ իրականացվող ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքականությունում «բացակայում է ազգայինը, որի մեջ արտցոլված չէ հայ ժողովրդի պատմական դառը կենսագրությունը»: Հետևաբար, եզրակացնում է «Արձագանք»-ը, Հայաստանի իշխանությունները «ի վերջո պետք է ճանաչեն թուրքերին և Երևանի հրապարակում հանդիսավորությամբ այրեն Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրված արձանագրությունները» [3, 2010, № 3, մարտ, էջ 6]:

Ամսաթերթի կարծիքով հարկավոր է նկատի ունենալ, որ ընդամենը մեկ քվեի առավելությամբ Ստոկհոլմում և Վաշինգտոնում ընդունված բանաձևերը վկայում են, թե «ինչպես արդարությունն ու ճշմարտությունը կարող են սակարկության առարկա դառնալ»: Չնայած դրան, ստեղծված իրադրությունում չի կարելի թերա-

գնահատել նույնիսկ մեկ ձայնի առավելությամբ «ձեռք բերված հաղթանակները»: Միջուռքի հայկական լոքերին, կառույցները, Հայ Դատի հանձնախմբերը պետք է շարունակեն նպատակապես աշխատանք տանել Հայոց ցեղասպանության ճանաչման համար «ի հեճուկս հսկայական միջոցներով օժտված թուրքական պետական քաղաքականության» [3, 2010, № 3, մարտ, էջ 8]:

«Արձագանք»-ի կարծիքով դրա անհրաժեշտությունը մշտապես կա: Դրա վկայությունը ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի պատասխանատուի ներկայացրած տեղեկությունն է, ըստ որի՝ Անկարայում Իտալիայի դեսպանը դժգոհել է թուրքական հեռուստատալիքներից մեկի եթերում Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների թվում Իտալիան հիշատակելու դեմ: Այդ կապակցությամբ Հռոմի հայ համայնքը բողոքի նամակ է հղել Իտալիայի արտաքին գործերի նախարարությանը, Իտալիայի լրագրողների միությանը և անձամբ դեսպանին, ով թերթի գնահատմամբ՝ պարզապես հերքում է «Իտալիայի խորհրդարանի կողմից 2000 թ. նոյեմբերի 17-ին միաձայն ընդունված Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը» [3, 2010, № 3, մարտ, էջ 11]:

Անդրադառնալով աշխարհի տարբեր երկրներում Հայ Դատի հանձնախմբերի գործունեությանը՝ «Արձագանք»-ը գրում է, որ 2010 թ. մարտի 10-ին Բուլղարիայի պահպանողական «Կարգ, օրենք և արդարություն» կուսակցությունը Հայոց ցեղասպանությունը դատապարտող հայտարարություն է ներկայացրել երկրի խորհրդարանին: Լիբանանում լույս տեսնող «Հայաթ» օրաթերթը Հայոց ցեղասպանության թուրքական ուրացման դեմ, որը շարունակում է նաև Ռ. Թ. Էրդոհանը, դատապարտող հոդված է տպագրել: Հայկազյան համալսարանը շրջանառության մեջ է դրել միջազգային իրավագետ Ալֆերտ դը Չայասի անգլերեն գիրքը, որտեղ ասվում է, որ Հայոց ցեղասպանության իրավական դատապարտումը ժամանակային սահմանափակում չունի, Թուրքիան պետք է հատուցի հայությանը և այսօր էլ շարունակում է ցեղասպանությունը՝ ոչնչացնելով հայկական պատմամշակութային հուշարձանները:

ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը տեղեկացնում է Հայոց ցեղասպանության 95-ամյակի կապակցությամբ Մադրիդի Իրավաբանական համալսարանում միջազգային գիտաժողով կազմակերպելու մասին: Հանձնախումբն աշխատանքներ է տանում Բարսելոնայում խորհրդաժողով կազմակերպելու ուղղությամբ: Ապրիլի 22-24-ը Բրազիլիայում, Ման Պատույի համալսարանում, նույնպես տեղի է ունենալու միջազգային գիտաժողով [3, 2010, № 3, մարտ, էջ 11]: Ըստ ամսաթերթի՝ 2010 թ. մարտի 27-ին

Ամերկայի Հայ Դատի հանձնախումբը կազմակերպել է բողոք ցույց՝ ընդդեմ ԱՄՆ-ի կոնգրեսական Մայքլ Մրքմենդին, ով թուրքական իշխանություններից ու կազմակերպություններից մշտապես նվիրատվություններ է ստանում և մարտի 4-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնախմբի նիստում դեմ է քվեարկել Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունմանը [3, 2010, № 3, մարտ, էջ 11]:

«Արձագանք»-ը հանգամանորեն լուսաբանում է Հայոց ցեղասպանության 95-ամյակի կապակցությամբ աշխարհի շուրջ 20 երկրներում սփյուռքի հայկական կառույցների նախաձեռնությամբ 2010 թ. ապրիլին տեղի ունեցած բազմաթիվ միջոցառումները: Ամսաթերթն առանձնապես կարևորում է Կիպրոսում, Լիբանանում, Փրանսիայում, Հունաստանում, Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում կայացած ոգեկոչման զանգվածային հանդիսությունները, երթերը, ցույցերը, քայլարշավները, Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված պատարագներն ու հոգեհանգստյան արարողությունները, թուրքական իշխանությունների ժխտողականության դեմ բողոքի ակցիաները: Դրանց մասնակցել են ոչ միայն տեղի հայ համայնքի հազարավոր ներկայացուցիչներ, Հայ Դատի հանձնախմբերի անդամներ, այլև այդ երկրների բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, խորհրդարանների պատգամավորներ, կուսակցական և հասարակական, մշակութային գործիչներ, ճանաչված մտավորականներ և հոգևորականներ:

«Արձագանք»-ը ստացված պաշտոնական լուրերով պատմում է, աշխարհի բոլոր անկյուններում կայացած ոգեկոչման արարողությունների ժամանակ միահամուռ դատապարտել են Թուրքիայի իրականացրած ոճրագործությունը, սեփական պատմության արյունոտ էջերից հրաժարվելը և ցեղասպանության իրողությունը ժխտող քաղաքականությունը: Ամսաթերթը նշում է, որ մինչ աշխարհի բազմաթիվ երկրներում հարգանքի տուրք էին մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, Թուրքիայում ապրիլյան օրերին զբաղված են քաղաքական աճաբարությամբ: Թեև ապրիլի 24-ին Կ. Պոլսի Թաքսիմ հրապարակում թուրք մտավորականները ոգեկոչել են 1915 թ. զոհերի հիշատակը, իսկ Պեյոլլու մշակույթի սրահում ցուցադրվել է Լոուրենս Ջորդանի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված փաստագրական ֆիլմը, այդուհանդերձ թուրք ազգայնականներն այդ օրն անցկացրել են հակահայկական ցույցեր, հրկիզել են Հայաստանի դրոշը և ծածանել Թուրքիայի և Ադրբեջանի դրոշները [3, 2010, № 4, ապրիլ, էջեր 1-7]:

«Արձագանք»-ը ապրիլին կայացած ոգեկոչման միջոցառումների կազմակերպման գործում կարևորում է ՀՅԴ կառույցների դերը և ընդգծում. «Դաշնակցությունը ձևակերպել է հայ ժողովրդի ազգային բաղձանքները միջազգային քաղաքական նոր պայմաններին համապատասխան և հրապարակ բերել Հայ Դատի բանաձևը՝ «թրքահայ հողերի կցումը Հայաստանի Հանրապետությանը և տարագիր հայութեան վերադարձը հայրենիք» [3, 2010, № 4, ապրիլ, էջ 11]: Ամսաթերթը միաժամանակ կարևորում է աշխարհասփյուռ Հայ Դատի հանձնախմբերի անուրանալի դերը հայ ժողովրդի արդարացի պահանջատիրությունը բոլոր մակարդակներում բարձրացնելու և այն ընկալելի դարձնելու գործում: «Արձագանք»-ի համոզմամբ՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտներն ու դժվարությունները՝ Հայ Դատի հանձնախումբերը տարիներ շարունակ «իրենց աշխատանքներն իրականացնում են նախանշված ուղով [3, 2010, № 4, ապրիլ, էջ 11]:

Ծնորհիվ ՀՅԴ Հարավային Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի և Հայ Դատի հանձնախմբի հիմնավոր բողոքի և արդարացի պահանջի, 2010 թ. մայիսին չեղարկվեց Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի նախապես համաձայնեցված այցը Արգենտինա և իսպանվեց Բուենոս Այրեսում Աթաթուրքի կիսանդրու տեղադրումը: Ամսաթերթը կարևորում է, որ «բարոյապես անընդունելի» այս ծրագիրը տապալվեց հատկապես մայիսի 28-ին՝ Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման օրը [3, 2010, № 5, մայիս, էջ 2]:

ՀՅԴ Հարավային Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գևորգ Տոմանյանն «Արձագանք»-ին գրում է, որ Թուրքիան ձգտում է Հարավային Ամերիկայի երկրներում թուլացնել Հայ Դատի հանձնախմբերի գործունեությունը, որին հակադրվում է առևտրական պայմանագրեր կնքելով և փոխադարձ այցելություններ կատարելով: Նրա կարծիքով Թուրքիայի այս ջանքերը մեծապես մեղմում են ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի վարած «ֆուտբոլային դիվանագիտությունը», որով ճանապարհային քարտեզ սահմանելը և «տխրահռչակ արձանագրությունները» ստորագրելը թուրք դիվանագետներին մանևրելու հնարավորություններ են տալիս: Նրանք դրանով միջազգային հանրությանը և հարավամերիկյան իրենց գործընկերներին փորձում են համոզել, որ հայ-թուրքական երկխոսությունը կարգավորելու է հարցը, հետևաբար կարիք չկա տարբեր հայտարարություններ անելով կամ միջոցառումներ կազմակերպելով խանգարել այդ գործընթացին: Գ. Տոմանյանի համոզմամբ՝ Ռ. Թ. Էրդողանը Հարավային Ամերիկա այց կատարելով ցանկանում էր Հայոց ցեղասպանության ժխտողականությանն ավելի

ցուցադրական բնույթ տալ Աթաթուրքի կիսանդրու գետեղման նախաձեռնությամբ: Հայկական դիվանագիտության արձանագրություններով կաշկանդած Թուրքիայի վարչապետը, սակայն թերագնահատեց Արգենտինայի «հայ համայնքի ցատումն ու գորաշարժի կարողակարությունը, որը նրան հուժկու հակահարված տվեց» [3, 2010, № 8, օգոստոս, էջ 8]:

«Արձագանք»-ը հայտնում է 2010 թ. մայիսին Երևանում և Ստեփանակերտում Հայ Դատի հանձնախմբերի հերթական խորհրդաժողովի կայացման մասին: ՀՅԴ Բյուրոյի անդամ Լ. Մկրտչյանը երևանյան նիստի բացման իր խոսքում նշել է, որ Հայ Դատի հանձնախմբերն այն ուժն են, որ դաշնակցությանը կապում են սփյուռքահայ համայնքների և Հայաստանի հայության հետ: Հանձնաժողովների միջոցով է համահայկական ներուժը կենտրոնանում և ապահովում հայության՝ իբրև ամբողջական ուժի ներկայությունը աշխարհի քաղաքական քարտեզի վրա: Ամսաթերթի տեղեկությամբ Արցախի նախագահ Բակո Սահակյանը Հայ Դատի հանձնախմբերի և գրասենյակների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ բարձր է գնահատել նրանց աշխատանքները Հայոց ցեղասպանության ճանաչման, հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության և սփյուռքի մեջ հայապահպանության ուղղությամբ [3, 2010, № 5, մայիս, էջ 6]:

«Արձագանք»-ը գոհունակությամբ հայտնում է, որ 2010 թ. մայիսի 12-ին Թբիլիսիում տեղի է ունեցել Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի Վրաստանի գրասենյակի բացումը, որին ներկա են եղել Վրաստանի կառավարության, Հայոց թեմի առաջնորդարանի, ԱՄՆ դեսպանատան, հայկական և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ամսաթերթի տեղեկություններով՝ Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը հայտարարություն է տարածել, որով իր վրդովմունքն ու բողոքն է հայտնել, որ «Վուդրո Վիլսոն» կենտրոնը պարզևատրել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ա. Դավութջյուն: ԱՄՆ Կոնգրեսին ուղղված բողոք նամակի մեջ Հայ Դատի հանձնախումբը շեշտել է, որ նրան պարզևատրելու գաղափարը հակասում է ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի դավանած արժեքներին: Ա. Դավութջյուն ներկայացնում է այնպիսի պետություն, գրում է թերթը, որը հերքում է Հայոց ցեղասպանությունը և «արգելք է հանդիսանում արդարության հաստատմանը» [3, 2010, № 5, մայիս, էջ 6]:

«Արձագանք»-ը հայտնում է, որ ՀՅԴ Հարավային Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը 2010 թ. հուլիսի 7-ին Կորդոբայում համաձայնագիր է ստորագրել «Խտրականության, Օտարաշարժության և Ցեղասպանության դեմ

Ազգային ինստիտուտի, Կորդոբայի քաղաքապետարանի և Հրեական կազմակերպությունների համախումբ՝ ՏԱԻԱ-ի Կորդոբայի մասնաճյուղի միջև, մարդկային իրավունքների վերաբերյալ միասնական քաղաքականություն վարելու նպատակով: Հայ Դատի հանձնախմբի նախագահ Էդուարդո Թորոսյանն իր ելույթում նշել է, որ առաջիկայում համաձայնագիր պետք է ստորագրվի նաև Կորդոբայի պետական համալսարանի հետ, որով, սկսած 2011 թ., համալսարան դիմող ավելի քան 20 հազար թեկնածու ուսանողները պարտավոր կլինեն «ուսանել Հայոց ցեղասպանության և Հրեաների ողջակիզման նյութերը» [3, 2010, № 7, հուլիս, էջ 6]:

«Արձագանք»-ը տպագրում է ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի երևանյան խորհրդաժողովում ՀՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի զեկույցը, որում մասնավորապես ասվում է. «այսօր անհրաժեշտ է արձարձել Հայ Դատի ամողջական փաթեթը: Մենք պետք է լավ հասկանանք, որ միայն Հայոց ցեղասպանության ճանաչումով չպետք է հարցը սահմանափակել: Հատուցում, բոլոր իրավունքների վերականգնում. սա է ամբողջական փաթեթը» [3, 2010, № 5, մայիս, էջ 13]:

Տեղեկացնելով իր ընթերցողներին, որ այսուհետև Հայ Դատի վերաբերյալ բոլոր լուրերն ու նորությունները զետեղելու է Կիպրոսի Հայ Դատի հանձնախմբի նորաստեղծ կայք էջում, ամսաթերթը հայապահպանումն ու Հայ Դատը համարում է համայն հայության սրբազան պայքարի երկու կարևոր բաղադրիչները, քանի որ առանց դրանց «անհմաստ է սփյուռքում ունենալ հայկական կուսակցություն, դպրոց, թերթ, եկեղեցի» [3, 2010, № 6, հունիս, էջ 7]:

«Արձագանք»-ի լրատվությամբ՝ 2010 թ. հոկտեմբերին Բեյրութում կայացել է Միջին Արևելքի Հայ Դատի հանձնախմբերի և գրասենյակների ներկայացուցիչների խորհրդաժողով, որը քննարկել է ներկա քաղաքական զարգացումների լույսի տակ այդ մարմինների գործունեությունում առաջացած դժվարությունները հաղթահարելու ուղիները: Խորհրդաժողովին մասնակցած Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Քուվեյթի և Իրանի Հայ Դատի հանձնախմբերի ներկայացուցիչները նշել են, որ անհրաժեշտ է նոր մարտավարություն մշակել դիմագրավելու համար Միջին Արևելքում ժխտողականության քաղաքականության ներթափանցմանը: Նրանք փաստել են, որ տարածաշրջանում գնալով ավելի է ծավալվում և հզորանում Թուրքիայի դերակատարությունը, որին Հայ Դատի հանձնախմբերը «պետք է մոտենան հավելյալ գիտակցությամբ, ամենայն զգաստությամբ և առողջ գործելակերպով» [3, 2010, № 10, հոկտեմբեր, էջ 12]:

«Արձագանք»-ն այս գործելակերպի դրսևորումներից մեկը համարում է 2010 թ. նոյեմբերի 10-ին Բեյրութ այցելած Ռ. Թ. Էրդոհանի դեմ լիբանանահայության բողոքի զանգվածային ցույցը, որին մասնակցել է ավելի քան 10.000 ցուցարար: Նրանք կոչ են արել Թուրքիային «ճանաչել Հայոց ցեղասպանությունը, հատուցում կատարել դրա համար և վերադարձնել հայոց բռնագրաված հողերը» [3, 2010, № 11, նոյեմբեր, էջեր 2-3]:

Բեյրութի «Ազդակ» թերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարյանը աշխարհաքաղաքական նոր դասավորումների լույսի ներքո «Արձագանք»-ում գրում է, որ հայության և Հայաստանի հետ առնչվող իրադարձությունները պարտավորեցնում են վերասահմանել Հայ Դատի պահանջը: Նրա կարծիքով՝ «Հայ Դատը միայն Ցեղասպանության ճանաչման հարցը չէ, միայն Արևմտահայաստանի պահանջատիրությունը չէ, միայն ջավախահայության իրավունքները պաշտպանելու հրամայականը չէ, ոչ էլ սոսկ ԼՂՀ-ի անկախության միջազգայնացումն է: Հայ Դատն այս բոլորի ամբողջությունն է» [3, 2011, № 2, փետրվար, էջ 7]: Ելնելով այս սահմանումից՝ նա առաջ է քաշում այն միտքը, որ Միջին Արևելքի երկրներում թուրքական գործոնի աշխուժացմանը պետք է հակադրել Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի համատեղ ջանքերը, նրանց համագործակցությունը դարձնել առավել արդյունավետ: Դրան հասնելու համար անհրաժեշտ է սահմանել «հայության ներքին ճանապարհային քարտեզ»:

«Արձագանք»-ն անդրադառնում է Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի հաստատման պահանջով Հայ Դատի հանձնախմբի Փարիզի գրասենյակի կողմից 2011 թ. մարտի 12-ին կազմակերպված բողոքի ցույցին: Օրինագծի ընդունման գործընթացը սառեցվել է 2006 թ., Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին նախագահական ընտրությունների ժամանակ հայ համայնքին խոստացել էր օրինագիծն ընդունել տալ, բայց իր խոստումը չի կատարել, որով, գրում է թերթը, վիրավորել է հայ համայնքին: Հանձնաժողովի նախագահ Հ. Վարժապետյանը քննադատել է Ն. Սարկոզին, ով Թուրքիային հավաստիացրել է, որ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը չի հաստատվելու [3, 2011, № 3, մարտ, էջ 14]:

Ամսաթերթը դրվատում է Ֆրանսիայի Հայ Դատի գրասենյակին, որը բողոք է ներկայացրել Շվեդիայի վարչապետին նախարար Էրիկ Ուլենհարքի պահվածքի կապակցությամբ: Նա Ստոկհոլմի սինագոգում, հրեաների ողջակիզման կապակցությամբ ունեցած ելույթում հիշել է Ա. Հիտլերի խոսքերը և օգտագործել «Հայոց ցեղա-

սպանություն» արտահայտությունը, բայց տեղի տալով Թուրքիայի պաշտոնական բողոքներին իր կայքից հեռացրել է այդ արտահայտությունը: Փրանսիայում Շվեդիայի դեսպանը Հայ Դատի տնօրենի հետ հանդիպմանը հայտնել է, որ նախարարի ելույթը նրա անհատական համոզմունքի հարցն է և չի արտահայտում Շվեդիայի կառավարության պաշտոնական տեսակետը [3, 2011, № 3, մարտ, էջ 14]:

«Արձագանք»-ի տեղեկությամբ 2011 թ. մարտի 9-ին Իսպանիայի խորհրդարանը մերժեց Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ խնդրագիրը, որը ներկայացրել էին Կատալոնիայի անկախական և Բասկերի ազգայնական կուսակցությունները: Իսպանիայի Հայ Դատի հանձնախումբը անմիջապես արձագանքեց դրան՝ շեշտելով, որ դրանով Իսպանիայի խորհրդարանը չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը ճանաչման վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի կողմից 1987 թ. ընդունված բանաձևը: Հանձնախմբի բողոքում ասվում էր. «Ժամանակը չի մեղմում հանցագործությունների լրջությունը... մենք պատասխան չենք ուզում: Մենք պահանջում ենք պատմական արդարություն» [3, 2011, № 3, մարտ, էջ 14]:

«Արձագանք»-ը գրում է ՀՅԴ բյուրոյի, Ամերիկայի և Ավստրալիայի Կենտրոնական կոմիտեների և Հայ Դատի հանձնախմբերի ու գրասենյակների նախաձեռնությամբ 2011 թ. ապրիլին Նյու Ջերսիում կայացած խորհրդաժողովի մասին: Խորհրդաժողովի մասնակիցները խորքային քննարկումների նյութ են դարձրել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ուրացումը և արդարության հաստատման դեմ պաշտոնական Անկարայի հարուցող խոչընդոտները հաղթահարելու, ինչպես նաև «հայության և ընդհանրապես մարդկության դեմ այդ ոճիրի համար Թուրքիայի կողմից պետական պատասխանատվություն ընդունելու և արդար, ամբողջական և տևական լուծում ապահովելու ռազմավարությունները» [3, 2011, № 4, ապրիլ, էջ 6]:

«Արձագանք»-ը գոհունակությամբ հայտնում է, որ Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը հակազդել է Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված ԱՄՆ-ի նախագահ Բ. Օբամայի կողմից «ցեղասպանություն» եզրույթը չօգտագործելուն: Հանձնախումբը տարածած հայտարարության մեջ նախագահի ուղերձը որակել է «Թուրքիայի սպառնալիքների առջև... ամոթալի զիջում» [3, 2011, № 4, ապրիլ, էջ 11]:

Հանձնախումբը տեղեկացնում է, որ, ի հակադրություն նախագահ Բ. Օբամայի երկչու վարքագծի, Արգենտինայի դատարանը բավարարել է ավելի քան 10 տարի առաջ ներկայացրած Գրեգորիո Հայրապետյանի հայցը և «ցեղասպանություն է որակել 1915-1923 թթ. Օսմանյան

կայսրության կողմից հայ բնակչության նկատմամբ կոտորածներն ու բռնի տեղահանությունը» [3, 2011, № 5, մայիս, էջ 6]:

«Արձագանք»-ը տեղեկաց նում է, որ Իսպանիայի նոր կազմավորված Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ Մադրիդի համալսարանում Խոսե Լուիս Օրելյան, Խոսե Անտոնիո Կուրիարան և Հայ Դատի հանձնախմբի կենտրոնական վարչության անդամ Մարիո Նալբանդյանը ուշագրավ դասախոսություններ են կարդացել՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը: Նրանք նշել են, որ միջազգային հանրությունը բավարար ճնշում չի գործադրում, որպեսզի Թուրքիան դադարեցնի Հայոց ցեղասպանության ժխտման քարոզչությունը: Մ. Նալբանդյանը կարևորել է Իսպանիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին նոր թափ հաղորդելը [3, 2011, № 6, հունիս, էջ 6]:

Կիպրոսի Հայ Դատի հանձնախումբը տեղեկացնում է 2011 թ. հունիսի 23-ին կայացած քաղաքական երեկոյի մասին, որի ընթացքում Կիպրոսի համալսարանի թուրքագիտության և Արևելյան գիտությունների ամբիոնի տնօրեն Նիյազի Զըզըլեուրեքը հայտարարել է. «միայն ժողովրդավար Թուրքիան կարող է վաղը ճանաչել Հայոց ցեղասպանությունը, բայց ոչ ներկայիս Թուրքիան» [3, 2011, № 6, հունիս, էջ 15]:

Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը 2011 թ. օգոստոսի 17-ին բողոք-նամակ է հղել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնին՝ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆրենսիս Ռիքարդոնի հայտարարության կապակցությամբ: Դեսպանն ասել է, որ Թուրքիայի տարածքում գտնվող քրիստոնեական եկեղեցիները 1915 թ. իրադարձություններից հետո շարունակում են գործել որպես եկեղեցիներ, մինչդեռ դրանց մեծ մասը ոչնչացված ու պղծված է թուրքական իշխանությունների կողմից: Հ. Քլինթոնը հանձնախմբին պատասխանել է, որ թուրք դեկավարների հետ հանդիպումների ժամանակ «իրենք մշտապես արձարծում են դավանանքի ազատության և եկեղեցիների բռնագրաված գույքը կրոնական համայնքներին վերադարձնելու հարցերը» [3, 2011, № 10, հոկտեմբեր, էջ 3]: Շարունակելով այս թեման, «Արձագանք»-ը Թուրքիայի համար մեծ պարտությունն է համարում 2011 թ. դեկտեմբերին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձևը, որը Թուրքիայի կառավարությանը կոչ է անում վերադարձնել բռնագրաված ավելի քան 2 հազար եկեղեցիներն ու կալվածքները «իրենց օրինական տերերին»: «Քալիֆորնիա Զուրիքը» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարոլդ Սասունյանը այս կապակցությամբ գրում է. «Մա առաջին անգամն է, որ աշխարհասփյուռ հայության համար ԱՄՆ Կոնգրեսը Թուրքիայից հատուցում պահանջեց և ոչ թե սոսկ Ցեղասպա-

նության ճանաչում» [3, 2011, № 12, դեկտեմբեր, էջ 10]:

2011 թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունեց, որի կապակցությամբ «Արձագանք»-ը ներկայացնում է Հայ Դատի Փարիզի գրասենյակի տնօրեն Հ. Վարժապետյանի արձագանքը: Նա հայտնում է, որ խորհրդարանի պատգամավորները չընկրկեցին թուրքական իշխանությունների ճնշումներին և սպառնալիքներին ու նրանց ուշադրությունը հրավիրեցին իրենց պատմությունը վերանայելու վրա: Թուրքերն այդ կապակցությամբ բողոքի ցույցեր կազմակերպեցին, որը Ֆրանսիայի դեմ էր և ոչ թե հայության: Նա օրինագծի ընդունումը համարում է «Հայ Դատի հանձնախմբի և հայ համայնքի միասնական պայքարի արդյունք» [3, 2011, № 12, դեկտեմբեր, էջ 11]:

«Արձագանք»-ի հավաստի տեղեկություններով այս օրինագծի ընդունման կապակցությամբ Ռ. Թ. Էրդողանը հայտարարել է, որ Թուրքիան դադարեցնում է Ֆրանսիայի հետ իր բոլոր քաղաքական, տնտեսական և զինվորական բոլոր հանդիպումները, սառեցնում է ռազմական համաձայնագրերը և ետ է կանչում իր դեսպանին Փարիզից: Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուն օրինագծի ընդունումը որակել է «թուրք ժողովրդի նկատմամբ անարգանք»: Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին ի պատասխան այդ հանդիմանություններին, հայտարարել է. «Թուրքիան շատ մեծ երկիր է և շատ մեծ մշակույթ ունի: Սակայն նրանք պետք է հարգանքով վերաբերվեն մեր դիրքորոշմանը» [3, 2011, № 12, դեկտեմբեր, էջ 2]:

«Արձագանք»-ը տեղեկացնում է, որ 2014 թ. տարեսկզբից Հայ Դատի հանձնախմբերը և գրասենյակները ձեռնամուխ են եղել Հայոց ցեղասպանության 100-ամյակը նոր հաջողություններով և ձեռքբերումներով դիմավորելուն: Այդ կապակցությամբ ՀՅԴ Բյուրոյի և քաղաքական հարցերի պատասխանատու Կիրո Մանույանը անդրադարձել է Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի հայտարարությանը, ըստ որի՝ պետք է ուժերը լարել և պատրաստվել 2015 թվականին: Նրա կարծիքով՝ այդ հայտարարությունն ուղղված է միջազգային հանրությանը, քանի որ Թուրքիան վտանգ է տեսնում այդ ուղղությամբ: Նա պարզաբանել է, որ 100-րդ տարիցը գործընթացի վերջը չէ, դա բոլորն էլ հասկանում են: Բայց քանի որ 100-րդ տարեկիցը խորհրդանշական տարի է, միջազգային հանրությունը պետք է ստիպի սկզբունքային մոտեցում ունենալ ցեղասպանության ճանաչման և հայ ժողովրդի իրավունքների հարցում: Թուրքիան մտահոգ է, որովհետև այդ հարցը թափանցել է թուրքական հասարակության մեջ և անհան-

գատացնում է իշխանություններին: Կիրո Մանույանը նշել է, որ Հայ Դատի հանձնախմբերն ու գրասենյակները առաջիկայում պետք է ծավալուն աշխատանքներ տանեն, որպեսզի 2015 թ. դառնա «հայության իրավունքների սահմանման և ճանաչման տարի» [3, 2014, № 2, փետրվար, էջ 3]: «Արձագանք»-ը հղում է անում նաև Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի հաղորդակցության և կապերի պատասխանատու Պետո Տեմիրճյանին: Նա հայտնել է, որ իրենց կառույցը ներկայումս զբաղված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցի ծրագրի մշակման գործով և շարունակելու է աշխատանքները եվրոպական տարբեր խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը բարձրաձայնելու ուղղությամբ:

«Արձագանք»-ը հայտնում է Թուրքիայի կառավարությանը կից Հայոց ցեղասպանության 100-ամյա տարեկիցի առիթով հայկական կողմի նախաձեռնությունների և ձեռնարկների դեմ պայքարող հատուկ կոմիտե ստեղծվելու մասին: 2014 թ. ապրիլի 23-ին Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարածած հայտարարությունում Թուրքիայի անունից ցավակցություն հայտնեց 20-րդ դարի սկզբում սպանված հայ զոհերի թոռներին: «Արձագանք»-ն անդրադառնում է այդ կապակցությամբ պետական, քաղաքական տարբեր գործիչների և ՀՅԴ կառույցների արձագանքին: Ամսաթերթը հղում է անում Ֆրանսիայի նախագահ Ֆ. Օլանդին, ում կարծիքով «Էրդողանի ուղերձը իմաստայից է, բայց բավարար չէ: 1915 թ. տեղի ունեցած ողբերգությունը մեկ անուն ունի՝ ցեղասպանություն» [3, 2014, № 4, ապրիլ, էջ 2]:

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը Թուրքիայի վարչապետի ուղերձն անվանել է «արհամարհանք մեր 1.5 միլիոն նահատակների հիշատակին և հիշեցրել, որ հայ ժողովուրդը Թուրքիայից ցավակցություն և բարոյախոսություն չի սպասում, այլ պահանջում է «Հայոց ցեղասպանության ճանաչում և հատուցում» [3, 2014, № 4, ապրիլ, էջ 2]:

Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Քեն Իսախիկյանը Թուրքիայի վարչապետի հայտարարությունը բնութագրել է որպես «երեսպաշտություն, իսկ արտաբերած ընդհանուր ցավի թեզը՝ անմտություն» [3, 2014, № 4, ապրիլ, էջ 2]: «Հ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանի բնութագրմամբ՝ այդ ուղերձը «Հայոց ցեղասպանության հանցագործության ժխտման և քաղաքական հերթական թերևս ավելի կատարելագործված դրսևորում է» [3, 2014, № 4, ապրիլ, էջ 2]: Կիրո Մանույանի կարծիքով կարևոր չէ, թե Ռ. Թ. Էրդողանի հայտարարությունը «ինչպես կհասկա-

նան աշխարհում, կարևոր է, որ այն ճիշտ ըմբռնեն Հայաստանում» [3, 2014, № 4, ապրիլ, էջ 2]:

«Արձագանք»-ի տեղեկություններով՝ 2014 թ. ապրիլի 7-ին Բյուրսեյում կայացած խորհրդաժողովը միահամուռ հավանություն է տվել Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի բանաձևին, որը պահանջում է Թուրքիայից 20-րդ դարի սկզբում 1.5 միլիոն հայերի, ինչպես նաև հույների և ասորիների նկատմամբ իրականացրած ոճրագործությունը ճանաչել որպես ցեղասպանություն [3, 2014, № 4, ապրիլ, էջ 4]:

Ամսաթերթն ուշադրությամբ հետևելով թուրքական լրահոսին նշում է, որ Թուրքիայի դեկավարությունը, չնայած միջազգային հանրության որոշակի ճնշումներին և Հայ Դատի արդարացի պահանջներին, շարունակում է ժխտողական քաղաքականությունը: Ռ. Թ. Էրդողանը, հայ ժողովրդին ցավակցություն հայտնելուց օրեր անց, կրկին ժխտել է, որ 1915 թ. տեղի ունեցած ողբերգությունը եղել է ցեղասպանություն: Դա բավական չէ, նրա ուղերձը արագորձնախարար Ա. Դավութթյուն համարել է «աննախադեպ համարձակ քայլ» և խորհուրդ տվել հետևել վարչապետի օրինակին, որպեսզի «թաղենք մեր ընդհանուր ցավը ու երկխոսություն սկսենք» [3, 2014, № 6-7, հունիս-հուլիս, էջ 6]: Նա միաժամանակ հայտարարել է, որ «հայության հետ տեղի ունեցածի մասին ամբողջ աշխարհում ընդունված տեսության չկա և միջազգային որևէ դատարան մինչ օրս 1915 թ. չի որակել ցեղասպանություն» [3, 2014, № 6-7, հունիս-հուլիս, էջ 6]:

«Արձագանք»-ը գոհունակությամբ հայտնում է, որ 2014 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող բանաձևի լուսններին, քննարկումներին և ընդունման մասնակցել է ՀՅԴ Հունաստանի Հայ Դատի հանձնախումբը՝ ներկայացնելով հայության դիրքորոշումը [3, 2014, № 8-9, օգոստոս-սեպտեմբեր, էջ 6]: ՀՅԴ բյուրոյի և Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ 2014 թ. նոյեմբերի 29-30-ը Աթենքում կայացել է խորհրդաժողով՝ Հայ դատի պահանջատիրության աշխատանքները համակարգելու նպատակով: Դրան մասնակցել են մեկ տասնյակից ավելի երկրների հանձնախմբերի, տարբեր միությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հունաստանի Հայոց թեմի առաջնորդը, ՀՀ դեսպանը և ուրիշներ [3, 2014, № 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 10]:

«Արձագանք»-ի 2015 թ. մարտ-ապրիլ ամիսների միացյալ համարն ամբողջությամբ նվիրված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բազմաբնույթ միջոցառումներին և Հայ Դատի հանձնախմբերի գործունեությանը: Ամսաթերթը հայտնում է, որ ապրիլի

2-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը միաձայն քվեարկել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի օգտին [3, 2015, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 11-12]: Ամսաթերթը հանգամանորեն պատմում է ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի մասնակցությամբ և Հռոմի Ֆրանցիսկոս պապի գլխավորությամբ տեղի ունեցած պատմական պատարագի մասին, ով իր ելույթում ասել է. «Հայոց ցեղասպանությունը հիշելը պարտադիր է. հանցանքը ծածկել կնշանակի թույլ տալ, որ վերքն արյունահոսի» [3, 2015, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 1]:

«Արձագանք»-ը Գերմանիայի նախագահ Իոահիմ Գաուկի և Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամերթի կողմից 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ոճրագործությունը ցեղասպանություն անվանելը, Գալիպոլիի ճակատամարտին նվիրված արարողությանը չմասնակցելը համարում է պաշտոնական Բեռլինի կողմից Թուրքիային հասցրած հարված: Թերթը նկատում է, որ Ցեղասպանության 100-րդ տարելիցի օրերին թուրքական իշխանությունները, անտեսելով աշխարհի ևս 10 երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ընդունված բանաձևերը, շարունակում են ժխտողական քաղաքականությունը: Մասնավորապես, Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենտ Արընչը հայտարարել է. «Մենք գիտակցաբար ու միտումնավոր ցեղասպանություն չենք արել» [3, 2015, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 9]:

«Արձագանք»-ը նշում է, որ չնայած Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է: Լյուքսեմբուրգի խորհրդարանը մայիսի 6-ին միաձայն պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, իսկ հունիսի 10-ին նման հարց ներառված է Եվրախորհրդարանի լիազումար նիստում: Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանի գնահատմամբ՝ Եվրախորհրդարանը դրանով ևս մեկ անգամ փաստեց, որ Թուրքիայի սպառնալիքներին ենթակա չէ: Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ջոն Պետը կոչ է արել ազատ խոսել 1915 թ. տեղի ունեցած իրադարձությունների մասին [3, 2015, № 5-6, մայիս-հունիս, էջ 4-6]:

«Արձագանք»-ը կարևորելով աշխարհի տարբեր երկրների խորհրդարանների, նահանգային և քաղաքային խորհուրդների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելը, միաժամանակ շեշտում է, որ համայն հայությունը, սփյուռքի հայկական կառույցները, Հայ Դատի հանձնախմբերը չպետք է բավարարվեն բանա-

ձևերի կամ հայտարարությունների ընդունմամբ, պետք է ձգտեն հայ ժողովրդի արդար պահանջի ամբողջական լուծմանը: Ամսաթերթն ընդգծում է, որ ցեղասպանության ճանաչման գործընթացից զատ, անհրաժեշտ է հասնել Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացրած ցեղասպանության արդյունքում հայ ժողովրդին հասցված նյութական, մարդկային և բարոյական վնասի հատուցմանը և հայկական հողերի վերադարձին: Վերջին պահանջը «Արձագանք»-ը որակում է որպես արդարության վերականգման միջոց՝ միլիոնավոր տեղահանված և հայրենագրկված հայերի հիշատակի առջև [3, 2015, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 18]:

Եզրակացություն

«Արձագանք» ամսաթերթը ստացված պաշտոնական լուրերի, հաղորդագրությունների և տարբեր երկրների լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա պարբերաբար լուսաբանում է Հայ Դատի հանձնախմբերի գործունեությունը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ: Ամսաթերթը չի սահմանափակվում դրանք որպես հրատապ լուրեր ներկայացնելով, այլ նախընտրում է տեղի ունեցած գործընթացները մեկնաբանել, վերլուծել և գնահատել ՀՅԴ Բյուրոյի անդամների, դաշնակցության տարբեր կառույցների, Հայ Դատի հանձնախմբերի ղեկավարների, սփյուռքահայ ճանաչված քաղաքական ու հասարակական գործիչների, թերթերի խմբագիրների հրապարակումներով և նրանց հետ հարցազրույցներով:

Ամփոփում

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը մեկնարկման պահից մինչ օրս գտնվում է սփյուռքի հայկական քաղաքական կուսակցությունների, տարբեր կառույցների, հասարակական կազմակերպությունների և Հայ Դատի հանձնախմբերի մշտական ուշադրության կենտրոնում: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքները պարբերաբար լուսաբանվում են սփյուռքահայ մամուլում: Կիպրոսի ՀՅԴ «Ազատամարտ» երիտասարդական կենտրոնի հրատարակության «Արձագանք» ամսաթերթը հանգամանորեն անդրադառնում է Հայոց

ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ սփյուռքահայ կառույցների, կազմակերպությունների, Հայ Դատի հանձնախմբերի ու գրասենյակների գործունեությանը աշխարհի տարբեր երկրներում: Ամսաթերթն առանձնապես կարևորում է Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ մի քանի տասնյակ երկրներում տեղի ունեցող գործընթացները և դրանց արդյունքում ընդունված բանաձևերի ու հայտարարությունների լուսաբանումը:

«Արձագանք»-ը մշտապես ներկայացնում է նաև թուրքական ժխտողականության դրսևորումների դեմ Հայ Դատի հանձնախմբերի քաղաքական և քարոզչական գործունեությունը, որի վերաբերյալ գոհունակություն է հայտնում: Ամսաթերթն ամբողջությամբ կիսում է հանձնախմբերի դիրքորոշումը, ըստ որի՝ թուրքական ժխտողականությունն իր դրսևորումներով ոչ միայն պետք է համարժեք պատասխան ստանա, այլև հայկական համայնքի ակտիվության ու միասնականության շնորհիվ միայն ճախողումներ արձանագրի: Բարձր գնահատելով այս ուղղությամբ Հայ Դատի հանձնախմբերի գործունեությունը՝ «Արձագանք»-ը շեշտում է, որ աշխարհի տարբեր երկրների հանձնախմբերն իրենց հիմնադրման պահից ի վեր կանգնած են հայ ժողովրդի արդար դատի պայքարի առաջամարտիկների շարքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Այվազյան Հ.** Հայ գրատպություն և գրքարվեստ: – Եր.: Հայկ. հանրագիտ. հրատ. 2015: – 1120 էջ:
2. **Հայ Սփյուռք հանրագիտարան:** – Եր.: Հայկ. հանրագիտ. հրատ. 2003: – 732 էջ:
3. «Արձագանք կիպրահայ գաղութի» ամսաթերթ, Հրատ.՝ Հ.Յ.Դ. «Ազատամարտ» երիտասարդական կենտրոնի: 1995-

*Տժանա/Հանձնվել է՝ 11.07.2025
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.07.2025
Принята/Ընդունվել է՝ 25.07.2025*